# 954 Տե՛ր, տուր մեզ Քո օգնությունը

1. Տե՛ր, տուր մեզ Քո օգնությունը
Նեղության, տառապանքի մեջ,
Կյանքի՛ աղբյուր, հայտնվիր մեզ.
Շատ եմ մեր նեղությունները,
Բայց Դու, Տե՛ր, փրկում ես այդ ամենից:

Դու փոխում ես սուգը իմ ցնծության և գոհության,
Խավարս լուսավորում և զորություն ես հագցնում,
Ո՞վ կա Քեզ պես, Տե՛ր իմ,
Թող հաճո լինեն Քեզ, Տե՛ր, իմ բերանի խոսքերը,
Եվ սրտիս խորհուրդները՝ Քո առաջին, ո՛վ իմ Հայր,
Իմ վեմ և իմ Փրկիչ:

2. Ո՜վ իմ Հայր, Դու զորացնում ես ինձ,
Բժշկում կոտրած սիրտը իմ,
Ընդունում ես աղոթքները իմ,
Օգնում ես ինձ Քո տաճարից.
Զարմանալի և հրաշալի Աստված ես Դու: